# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

***Յունիսի 1-ին, կիրակի. - Երկրորդ Ծաղկազարդ:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Նավասարդ եպս. Կճոյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Ահեղ գոչմամբ ուռն ի ձեռին Իջեալ յերկնից Միածին Որդին, Տեսանելով արթուն անուն Հայաստանեայց Սուրբ Լուսաւորչին» *(Պաղպատար Դպիր)* բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 16):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Յունիսի 8-ին, կիրակի. - Հոգեգալուստ (Պենտեկոստէ, յիսներորդ օր ի Զատկէն):***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Տուր ինձ ցնծութիւն փրկութեան, եւ հոգւով պետութեան քոյ հաստատեա զիս» *(Սաղմ. Ծ 14)* բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 19):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Յունիսի 15-ին, կիրակի. - Բ. կիր. զկնի Հոգեգալստեան: Յիշատակ Եղիայի մարգարէին:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Տիրայր արքեպս. Մարտիկյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 22):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Յունիսի 21-ին, շաբաթ. - Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին ելն ի Վիրապէն:***

Այսօր Մայր Տաճարում, Իջման Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Վարդան աբղ. Նավասարդյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Հովիւ քաջ բանաւոր հոտի Տէր Ս. Գրիգոր հաստատեցեր զհիմունս Եկեղեցւոյ ի Հայաստան երկրի ի վերայ հիման սուրբ առաքելոց...» (Շարակնոց) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 25):

Տոնի առիթով Մայրավանք էր բերվել նաև Ս. Գրիգոր Լուսավորչի սրբազան մասունքը, որին իրենց խոնարհումը բերեցին արարողությանը ներկա բազմաթիվ հավատացյալներ:

***Յունիսի 22-ին, կիրակի. - Տօն Կաթուղիկէ Ս. Էջմիածնի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, հընթացս որի Նորին Սրբությունը կատարեց եպիսկոպոսական ձեռնադրություն: «Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը «Տէր Աստուած մեր երեւեցաւ մեզ, արարէք տօնս ուրախութեան...» (*Սաղմ. ՃԺԷ 27*) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 5):

***Յունիսի 24-ին, երեքշաբթի. - Սրբոց կուսանացն Նունեայ եւ Մանեայ:***

Այսօր Մայր Տաճարում, Իջման Ս. Սեղանի վրա, եպիսկոպոսական իր անդրանիկ Պատարագը մատուցեց Տ. Բագրատ եպս. Գալստանյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Ուր եսն եմ, անդ եւ պաշտօնեայն իմ եղիցի» *(Յովհ. ԺԲ 26)* բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 27):

***Յունիսի 29-ին, կիրակի. - Գ. կիր. զկնի Հոգեգալստեան:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Դարգն արքեպս. Մարտիրոսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «զՈւխտն հարցն մերոց հաստատ եւ անսասան պահեա եւ տարածեա զայն ի վերա մեր, եւ ի վերա սերնդոց մերոց» բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 31):

Հավարտ Սուրբ և Անմահ Պատարագի, հանդիսապետությամբ Վեհափառ Հայրապետի, կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն՝ ի հիշատակ Գարեգին Ա Կաթողիկոսի վախճանման 4-րդ տարելիցի: